

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԵԼՃՈՒԲԵԱՆ ԹՈՒՐԲԵՐՈՒ

ԱՐՇԱՒԱՆՔԸ

(Շար. Բազմ. 1946. թիւ 9-10, էջ 258)

Թուրքերու ծագումը. — Տուրքիլ-բէկ. — Սելմուք քուրքերու առաջին խումբումը հայկական հողի վրայ. — Հայաստանը անպաշտպան. — Իբրահիմի արշաւանքը. — Սմբատաբերդի կոտորածը. — Արծնի կործանումը. — Կապուտաուի ֆակտամարտը. — Լիպարիտ եւ Տուրքիլ. — Պետրոս Գետադարձ Սեբաստիոյ մէջ. — Թոնդրակեցիք եւ Գրիգոր Մագիստրոս. — Հարպիկի ընդվզումը. — Հարպիկի գլխատումը. — Կեղեկումի փախափակումը. — Հայ քաղաքներ. — Կարսի կոտորածը:

ԹՈՒՐԲԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Թուրքերու բնակութեան աշխարհը կը կոչուի Թուրքաստան, որու անուան տակ կը հասկցուի նաեւ Թաթարիստան կամ Կեղրոնական Ասիա: Անոր սահմաններն են՝ հիւսիսէն Սիպիր, արեւելքէն Չինաստան, հարաւէն Հնդկաստան, Աֆղանիստան եւ Պարսկաստան, արեւմուտքէն Կասպից ծովը եւ եւրոպական Ռուսաստան: Այս հսկայ աշխարհը, որ այսօր ալ ողակական տիրապետութեան տակն է, ունի 3·640·000 քառակուսի քիլոմետր տարածութիւն, եւ 7·800·000 ազգաբնակչութիւն⁽¹⁾:

Թուրք պատմագիրներու համաձայն՝ Թուրք ազգին նախահայրն եղած է Թուրք անունով մէկը, որ իբր թէ թոռն եղած ըլլայ Յաբեթի, որդի Նոյ նահապետի, որով Թուրք ազգը սերունդ կ'ըլլայ յաբեթական ցեղախումբին, այսօր ծանօթ հնդեւրոպական անունով:

Իսկ Թուրքական ուրիշ պատմական աւանդութեան մը համեմատ՝ Ուղուզ խան, որտեղ եւ հուժկու մարդ մը, թոռնորդի Թուրք խանի, ապրած է Արրահամ նահապետի ժամանակները: Ուղուզ խան ճանչնալով ճշմարիտ Աստուծոյ զոյութիւնը, կը հրաժարի հայրենի դիցապաշտութենէն: Նա եօթանասուն տարի պատերազմ մղելով իր Գարա հօրը դէմ, որուն յաղթելով՝ իր իշխանութեան աթոռը կը հաստատէ Եաշ⁽²⁾ մեծ քաղաքին մէջ, եւ իր ձեռքին ներքեւ կը նուաճէ բովանդակ Թուրքաստան:

Երբ Ուղուզ խան մեռաւ, անոր վեց որդիները Թուրքաստանն երկու մասի բաժնեցին: Արեւելեան մասը բաժին ինկաւ երեք երիցազոյններուն, կոչուած «Պորտակիչք». իսկ արեւմտեան մասը ժողովուրդներէն երեք կրտսերները, կոչուած «Եոսանեք»⁽³⁾:

Վեց իշխաններէն ամէն մէկը չորս մանչ զաւակներ ունեցած է, որոնցմէ սերած կը համարուին Թուրքաստան աշխարհին քսան եւ չորս անուանի տոհմերը:

Բիւզանդիոնի եւ Հայաստանի պատմութեան հետ սերտորէն կապուած է արեւմտեան Թուրքաստանի իշխաններուն պատմութիւնը, որովհետեւ ասոնք է որ հետզհետէ զօրանալով՝ մինչեւ Բիւզանդիոն եւ Դանուբ յաղթանակներ կանգնեցին: Ահա ասոնցմէ է որ սերած են Ուղուզեան, Սելմուքեան եւ Օսմանեան: Ուղուզեանց ցեղապետը կը համարուի Տալ խան, Սելմուքեանց՝ Տէնիզ խան, եւ Օսմանեանց՝ Կէօք խան: Սելմուքեանց արքունական տոհմին նախահայրն եղած ըլլալով Սելմուք անունով իշխան մը, որդի Տաղազի, տասներորդ դարուն զօրանալով Սմբատաբերդի կողմերը՝ Տէնիզ խան

նի սերունդը՝ այդ պատճառով յորջորջուած է Սելմուքեան⁽⁴⁾:

Ուղուզեանք շարունակ պատերազմի մէջ եղած են Պարսկաստանի թագաւորներուն եւ Պաղտատի խալիֆաներուն հետ: Անոնց խաներէն մէկը, Սալուր խան անունով, տասներորդ դարուն ընդունելով մահմետական կրօնը՝ կոչուեցաւ Չանազ խան կամ Գարա խան, որ առաջինն եղաւ իր ժողովուրդին Թուրքման անուն տուողը, որոշելու համար իր ժողովուրդը ցեղակից թուրքերէն, որոնք աւելի ուշ դարձան մահմետական կրօնքին ծոցը: Իսլամ զաւակներէն մը, Նէշրի, Թուրքման բառը կը ստուգարանէ Թուրք իման, որպէս թէ «Թուրքահաւատ»: Այս թուրքմաններու բնաշխարհը կը տարածուի Կասպից ծովուն արեւելեան կողմը, ապա այդ տեղէն տասնեւմէկերորդ դարուն անոնցմէ խումբ մը եկաւ սիւնեցաւ Հայոց աշխարհին մէջ⁽⁵⁾:

Սակայն ամէնէն աւելի Սելմուքեան եւ Օսմանեան թուրքերը՝ պատմական նոր թուական մը բացին միջազգային պատմութեան մէջ: Մինչ արեւելեան Թուրքաստանի ցեղախումբերը իրենց տիրապետութիւնը կը տարածէին Չինաստանի վրայ, տասներորդ դարուն կը հասնէին մինչեւ Ուստուի ափերը եւ այն դաշտաղէտիներուն մէջ՝ որ կը տարածուէին այդ դեպին եւ Կասպից ծովուն միջեւ, Սելմուքեան եւ Օսմանեան թուրքերը դուրսնէութեան ուրիշ դաշտ մը ընտրեցին: Վաչկատուն եւ հովիւ, ինչպէս իրենց ցեղակիցները, դարերով ապրել էին վրանի տակ, անանելով իրենց հօտերու արտադրութիւններով եւ նստակեաց ազգաբնակչութիւններու շահագործումով:

Ահա այդ թափառական եւ խաչնադարման ժողովուրդներն են, որ, ուղ-

մական եռանդով լեցուն, ծանր պիտի կշռեն իսլամական աշխարհի ճակատագրին վրայ, եւ այդ տեսակէտով անոնց խաղացած դերը կը շահադրուէ քրիստոնեայ եւրոպայի եւ յատկապէս Հայաստանի պատմութիւնը: Սելմուքներու տարածումը, որոնք, նորոգելով է եւ Ը դարերու ռազմիկ իսլամին աւանդութիւնը, պիտի սպառնայ Բիւզանդական կայսրութեան զոյութեան եւ յառաջ պիտի բերէ խաչակիրներու հակազգեցութիւնը⁽⁶⁾:

Յիւրաի, Բիւզանդական արքունիքին կարճատեւ քաղաքականութիւնը Հայաստան աշխարհը կայսրութեան հետ կցելու, ոչ միայն պատճառ եղաւ որ Սելմուք թուրքերը պարբերաբար ասպատակէին հայկական հողը, այլ եւ անոր բացած ճանապարհի վրայէն ընթանալով՝ տասներորդ դարէն վերջը զօրանալով՝ տիրեն Կասպից ծովէն մինչեւ Միջերկրական ծովը, զրաւեն Պարսկաստանը, Դամասկոսը, Բերիան եւ Փոքր Ասիան, մինչեւ որ անոնց պետութեան աւերակներուն վրայ կանգնի Օսմանեան թուրքերու հաստակաւոր շինուածը:

Հայաստանի վրայ յարձակելու եւ Յոյները անկէ վնասելու նշանաբանը տուաւ Տուրքիլ-բէկը, իսկական հիմնադիրը Սելմուքեան կայսրութեան:

ՏՈՒՐԻՒԼ-ԲԵԿ

Տուրքիլ-բէկը, պետ Սելմուքեան թուրքերու, տաղանդաւոր զօրավար էր, պատերազմասէր, դիւանապետ եւ վրէժխնդիր: Անցած սելմուք բանակի մը զուլալը 1038-ին առաջացաւ դէպի Սորատան, եւ նոյն թուականին նա արդէն Նիշապուրի մէջ էր: Ղազնավիդները, ծագումով թուրք, փորձեցին իրենց եղբայրակիցները կեցնել, բայց, 1040-ին, ջախջախուեցան:

(1) Պէթը Լարուս. «Դիկտիոնէր Ինկլէշէ», հատ. ԺԵ. էջ 595:

(2) Երբ Ուղուզեանք արշաւելով հասան մինչեւ Մուրտաի, իրենց մեծ քաղաքին անունով այդ երկրին զինաւոր քաղաքը Եաշ կոչեցին:

(3) Հ. Գարբէէ Վրդ. Այվազովսքի. «Պատմութիւն Օսմանեան Պետութեան», հատ. Ա. էջ 3:

(4) Անդ. էջ 3:

(5) Հ. Գարբէէ Վրդ. Այվազովսքի. «Պատմութիւն Օսմանեան Պետութեան», հատ. Ա. էջ 4:

(6) Շարլ Դիլ եւ Ժորժ Մարտէ. «Լը Մոնտ Օսմանիսթ», հատ. Գ. էջ 572:

Դանդաճող մէջ: Նա այլեւս ցեղի մը պետք չէր, այլ վեհապետի մը կերպարանք: Գրաւորած քաղաքին մղկիթին մէջ՝ յորդորաքարոյդը իր անունով կը կատարուէր: Տուղրիւ-բէկը «Սելճուք Մեծերուն առաջինը պիտի ըլլայ»⁽⁷⁾:

Տուղրիւ-բէկ հարաւէն յառաջացաւ բռնադատելով ժորժանի, Թաթարիստանի եւ Խուրէզմի փոքր իշխանները ճանչնալու իր գերիշխանութիւնը: Հետագայ տարիներուն, նա տէր պիտի դառնայ պարսկական Իրազ-Աճէմի նահանգին, 1051-ին իր յաղթական մուտքը դործելով Սպահանի մէջ. յետոյ, 1054-ին, պիտի տիրէ Ատրպատականի, այսօր Ատրպէճան, մտնելով Դաւրէթ, պարսիկ նահանգին մայրաքաղաքը: Պաղտատի մէջ, Ալ-Գաթի խալիֆան, որ բռնադատուած մը տեղէն Պուեհեանց գերդաստանին խնամակալութեան ներքեւ, օգնութեան կը կանչէ Տուղրիւ-բէկը, իր յոյսը դնելով անոր ուժին վրայ, մէկ կողմէն իր տէրութեան կալուածները ուրիշ թուրքերու կողմէն տնտեսելէն, միւս կողմէն՝ իր պաշտպաններէն ազատուելու համար: Պուեհեաններէն մէկը Տուղրիւ-բէկին հետ դաշինք կը կնքէ, իր կորսուած իրաւունքներուն տիրանալու համար: Ինչպէս նահանգները, մայրաքաղաքն ալ, Պաղտատ, շփոթութիւններով պառակտուած է. Շիրինը Պաղտատի մէջ արեւնալիւր կը ուրեւնէր կը մղէն: Ալ-Գաթի խալիֆային վզուկը կը կանչէ Տուղրիւ-բէկը, որ 1055-ին հոն կը մտնէ եւ վերջ կը դնէ Պուեհեանց թագաւորութեան: Այդ օրէն սկսած՝ այն դերը զոր պարսիկները խաղացել էին, սկսան խաղալ Սելճուք թուրքերը: Դիպուածական դէպք մը ալ աւելի

փայլեցուց Տուղրիւ-բէկի բախտին աստղը:

Վերջին Պուեհեանց բանակին թուրք զօրավար մը, Բասասսիւրի անունով, Պաղտատի զինուորական հրամանատարը, մտածեց Խալիֆայութեան մայրաքաղաքին մէջ հաստատել Գահիրէի Ֆաթիմաներուն տիրապետութիւնը: Փախած ապաւինած ըլլալով Եգիպտոս, ճիշտ այն տեղն էր Տուղրիւ-բէկը Պաղտատ կը մտնէր, վճռեց զործադրել իր ծրագիրը, Խալիֆայութեան աթոռը բարձրացնելու Գահիրէի ամիրապետը Ալ-Մուստասիր, որ իր բոլոր զանձերը փախստականին տրամադրութեան տակ դրաւ: Յիրաւի, թուրք հրամանատարը տիրեց Պաղտատի եւ գերի բռնեց Ապպասեան խալիֆան: Ալ-Մուստասիր սկսաւ աճապարանքով Գահիրէի մէջ կառուցանել պալատ մը, հոն պատուաւոր կերպով արգիլելու համար կալանաւորը, բայց Սելճուք Տուղրիւ-բէկը, որ ըլլալիքը առաջուց իմացեր էր, քալեց Պաղտատի վրայ եւ խալիֆան ազատեց: Ալ-Բասասսիւրի փախաւ. նա ձերբակալուեցաւ եւ 1060 թուին սպաննուեցաւ⁽⁸⁾:

Այս նախախնամական օգնութիւնը՝ չէր կրնար առանց վարձատրութեան մնալ: Հանդիսաւոր ունկնդրութեան մը միջոցին, Տուղրիւ-բէկը, զոր խալիֆան փեսայացուցեր էր իր Սէիդա աղջկան հետ, ողջունուեցաւ «Սալքան» տիտղոսով, իբր թագաւոր Արեւելքի եւ Արեւմուտքի: Եւ իրօք, անոր իշխանութիւնը անվիճելի կերպով ճանչցան բովանդակ Իրազը, հիւսիսէն մինչեւ Ամիթ եւ Մուսուլ⁽⁹⁾: Աւելի ուշ, խալիֆան ալ աւելի շլացուցիչ տիտղոս տուաւ անոր, անուանելով զայն

« Բիւֆնիւ-տէվլէք », որ է ըսել՝ «Սիւն կամ Հաստատուիւն բախտի», զոր Վարդան պատմադիրը մէկ բառի մէջ խտացուցած է, կոչելով «Բիւֆնադուլլա»⁽¹⁰⁾:

Սուլթան Տուղրիւ-բէկը, « Մեծ Սելճուքներ»-ու առաջինը, մեռաւ 1063-ին, եօթանասուն տարեկան հասակի մէջ, որուն զլխուն վրայ հայ ժողովուրդը ուրիշ բան չէր կրնար դնել՝ բայց եթէ անէձքներու փունջ մը:

ՍԵԼՃՈՒԿ ԹՈՒՐԿԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒ ՎՐԱՅ

Դեռ հայ ժողովուրդը Եկեղեցի գաւառի ահագին երկրաշարժին⁽¹¹⁾ ահուսարսափին տակն էր, երբ աւելի սաստիկ փորձանք մը պայթեցաւ իր զլխուն:

Տուղրիւ-բէկը, որ Խորասանի մէջ զբաղած էր, իր նորահաստատ պետութիւնը ամրապնդելու համար, ծրագրեց Յոյները վստակ հինէն ու նորէն գրաւած հայկական գաւառներէն: Արշաւախումբին զլուխ կարգեր էր իր գերդաստանէն անդամ մը, Գրիմուշ, իր հօրեղբորդին: Սելճուք զօրավարը, 1046-ին, իր սելճուք թուրքերով եւ պարսիկներով՝ ոտք դրաւ հայկական հողի վրայ, եւ այդ թուականէն սկսած՝ հայկական կեանքը անցաւ անվերջ աղէտներու շարքէ մը:

Գրիմուշ, անցնելով Արգնի գաւառէն՝ իր անցքին կողոպուտի տուաւ Թլխում եւ Պաղին գաւառներուն աւանները, ջարդելով բազմաթիւ քրիստոնեաներ⁽¹²⁾:

Պաղինէն՝ Գրիմուշ իր հրոսները թափեց Արճէշ քաղաքին վրայ, Վանայ լիճին հիւսիս-արեւելեան կողմը եւ խնդրեց Հոռոմներու Ստեփանոս Լիքուդէսէն, Վասպուրականի կառապան, անցքի իրաւունքը:

(10) Վարդան Վարդապետ. «Հաւաքումն պատմութեան», էջ 96:

(11) «Բագմավէպ», Թ. 8, 1946, էջ 206:

(12) Մ. Ուսայեցի. Մասն Ա. էջ 116:

(13) Անդ. էջ 116-117:

քը: Բիւզանդացի լիազօր իշխանը հպարտութեամբ մերժեց եւ պատերազմ բացաւ անոր դէմ, բայց չարաչար յաղթուեցաւ, եւ անոնց ձեռք գերի ինկաւ: Թուրք պետերը զայն տարին Հեր քաղաքը եւ շատ չարչարանքներով մեռցուցին. ապա քերթեցին անոր մարմնոյն մորթը եւ լեցնեթեցին անոր պարսպէն կախեցին: Անոր լով խոտով՝ պարսպէն կախեցին: Անոր որդին պատահածը լսելով՝ եկաւ զնեց մարմինն ու մորթը, վճարելով տասը հազար դահեկան⁽¹³⁾: Իսկ երկու յոյն պատմադիրներու, Կէդրէնոսի եւ Չոնարասի, աւանդութեան համեմատ, թուրք պետերը յոյն զօրավարը Դաւրէթ տանելով՝ վաճառեցին իբր ստրուկ մը:

Ներկայանալով Տուղրիւ-բէկին, Գրիմուշ պատմեց անոր թէ Վասպուրական աշխարհը հարուստ, արգասանդ հող է, բայց անպաշտպան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՊԱՇՏՊԱՆ

Սելճուք զօրավարը իրաւունք ունէր յայտնելու, թէ Վասպուրականի զինուորական պաշտպանութիւնը գոյութիւն չունի: Յիրաւի, Սելճուք թուրքերուն առաջին խուժումը հայկական հողի վրայ, եւ բիւզանդացի կառապանին յոխորտալից պարտութիւնը՝ չարագուշակ դէպքերու դուռ մը կը բանար, որ ազիտաբեր պիտի ըլլար թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Բիւզանդիոնի համար:

Ճիշտ այդ շրջանին էր, որ Կոստանդին Մոնոմախոս կայսրը լուծեր էր հայկական ազգային զինուորական ուժերը, որ բիւզանդական զբաւումէն վերջն ալ 50.000 զինուորներէ կը բաղկանար. անոր փոխարէն հայ ժողովուրդին վրայ դնելով ջախջախի տուրքեր, պահելու պահպանելու համար մեր հողին վրայ հաստատուած կայսերական պաշտօնեաները եւ անոնց ձեռքին տակ գտնուող վարձկան զոհերը: Ջնջելով հայկական տեղացի զօրքերը, նոյն իսկ զօրծով ջնջուած կ'ըլ-

(7) Շարլ Դիլ եւ Ժորժ Մարսէ. «Լը Մոնտ Օռիանթալ», հատ. Գ. էջ 572:

(8) Անդ. էջ 573:

(9) Շարլ Դիլ եւ Ժորժ Մարսէ. «Լը Մոնտ Օռիանթալ», հատ. Գ. էջ 574: - Վերգեր. «Արաբի», էջ 464: - «Լարուս», էջ 198:

լար՝ երկրին պաշտպանողական ոգին: Վասն զի, ինչպէս ուրարտական թագաւորութեանց շրջանին ալ, հայը մշակ եւ հովիւ ժողովուրդ էր, որ, առաջնորդուած իր անուական դասակարգի զօրավարներէն, կը քալէր ասպատակող թըշնամիին դէմ, պատերազմի դաշտին վըրայ քաջաբար կատարելով իր պարտականութիւնը: Յիրաւի, կորովի, չարքաշ, հայրենասէր հայ զիւղացիներ էր, որ ի հեճուկս այնքան արշաւանքներու դիտցաւ պաշտպանել հայկական անկախութիւնը, եւ անոր շնորհիւ, նաեւ իր ընտանիքին կեանքը, ինչքը եւ պատիւը:

Հոս պէտք է յիշատակել Շիւրբերթէրի արդար դատաստանը, որ խտորէն կը ձաղկէ բիւզանդական ահաւոր պատասխանատուութիւնը, Հայաստանը իր բնական պաշտպաններէն զրկելուն համար: «Մոնոմախոսը, կ'ըսէ Փրանսացի նշանաւոր բիւզանդագէտը, շատ անխոհեմ դրոշուեցաւ՝ ջնջելով հայ քաջամարտիկ զիւղացիներու զինուորական հին եւ ուժեղ կազմակերպութիւնը, որ մինչեւ այդ ժամանակ ապահովէր էր սահմանապահութիւնը, արեան տուրքի փոխարէն տուրք հաստատելով: Ասով մէկ հարուածով ոչնչացաւ դիմադրական ուժը՝ զոր Հայաստանը կ'արձանացնէր ընդդէմ Բիւզանդիոնի թշնամիներուն: Պէտք եղաւ դիմել վարձկան բանակներու՝ պաշտպանելու համար այդ սահմանապահութիւնը — երկիրը, թրքական արշաւանքին դէմ: Այս վարձկանները, բընակահարար, որ իրենց հայրենիքին, իրենց կիներուն եւ իրենց գաւակներուն համար չէին կոուեր, ինչպէս մինչեւ այն ատեն ըրեր էր հայկական տեղացի զօրքը, կարող էր միայն չնչին ուժ մը ներկայացնել»:

Կարելի չէ այս տխուր էջը փակել՝ առանց յատուցել բերելու Մատթէոս Ուռհայեցիին արժանահաւատ խօսքերը: Նա Սելճուք թուրքերու մեր հայրենի հողին

վրայ շարունակաբար կատարած կործանիչ արշաւանքները նկարագրելէ ետքը, մատը բուն վէրքին վրայ կը դնէ, կազմելով սարսափելի ամբաստանադիր մը Բիւզանդիոնի դէմ:

«Ո՞վ կարող է պատմել, կ'ըսէ հայ գրիչը, այն բոլոր չարիքները, գործնականացնող տուրք կրեց Յունաց տկար եւ քուլամորթ ազգէն: Անոնք հայ գորականները իրենց յարկերէն եւ գաւառներէն հանեցին ցրուեցին, եւ Հայոց բագաւորութեան աքոռը ջնջեցին. փակեցին հայ գործերուն եւ գորավարներուն պահպանութեան շըրջապատ պարիսպները. Հռոմներու ազգն իրենց ֆաշութեան պարծանքը՝ անդարձ փախուստն ըրին. նմանեցան վատ հովիւներուն, որ գայլը տեսնելուն՝ կը փախչին: Հռոմներուն ջանքն եղաւ՝ Հայոց տան ամբարձրութեան պարիսպը փակել կործանել. անոնք ամէն յաղթութիւն իրենց վերագրեցին, եւ անպատկառելի երեսներով, ներքնացած գորավարներով եւ ներքինի գործերով ջանացին Հայերը պահել, այնպէս որ Պարսիկները՝⁽¹⁴⁾ բովանդակ Արեւելքը անտէր տեսնելով՝ չափազանց զօրացան, որ մէկ տարիէն հասան մինչեւ Կոստանդինուպոլսի դուռը, եւ տիրեցին Հռոմներու բոլոր աշխարհին, ծովեզերեայ ֆաղափներուն եւ կղզիներուն: Անոնք Յունաց ազգը Կոստանդինուպոլսի մէջ բանտարկեցին...: Պարսից դէմ մղուած պատերազմներէն յօժարութեամբ կը փախչին...: Երբ անոնք ֆաշ եւ զօրաւոր մարդ մը գտնէին, աչքերը կը խաւարեցնէին եւ կամ ծովը ձգելով խեղդամահ կ'ընէին. անոնց մեծագոյն փոյթն էր Հայոց բոլոր իշխանները եւ ֆաշ զինուորականները Արեւելքէն դուրս հանել եւ բերել բնակեցնել Յունաց քով: Եղան ներ-

(14) Այս անուն տակ պէտք է հասկնալ Սելճուք թուրքերը, որոնց հետ խառնուած էին նաեւ պարսիկները:

քիններ, եւ փոխանակ ֆաշերու պէս հաստ գրահներ կրելու՝ իրենց զգեստներուն գոգերը լայն եւ երկայն ըրին, փոխանակ պողպատէ սաղաւարտին՝ փակեղդ դրին. փոխանակ երկաթապատ քիլուրներու՝ օձիքը ուսերուն վրայ լայն բացին: Կիներու պէս հեգ եւ ծածուկ կը խօսին. միշտ զինուորութեան մէջ կը քուլած ֆաշ եւ մանկահասակ պատանիներուն կորուստին վրայ կը խորհին: Ասոնց ձեռքէն բոլոր հաւատացեալները գերի տարուեցան Պարսից աշխարհը»⁽¹⁵⁾:

(15) Մ. Ուռհայեցի. Մասն Բ. էջ 162-164:

(Շարունակելի)

ԽՈՍՏՈՒՄ

Շիրիւնդ եւ ճաշերուն մէջ պիտ' առկախեմ,
Օրրոցքի պէս, ոչր կը ննջէ կեանքը խաղաղ.
Որպէսզի քեզ գարնան հովերը օրօրեն,
Բստուներն ոչ լոյսը քեզի հետ ընեն միշտ խաղ:

Որպէսզի մահը չլլայ քեզ բաժնած երբեք
Անձրեւներէն՝ որ կարկաչուն տեղան վրաւ.
Ու տարափով ճանրացած ոտ մը դիշարեկ
Քեզ խոնարհի՝ գգուելով դեմքդ խանդակաւ...:

Պիտի հանգչիս ամենաբարձր ձիւղին վրայ.
Ու ճիւղման պատմութեան մէջ թիւրեղեայ
Պիտի խոշմեն կարօտաւոր առաջուներ:

Ու երբոր քեզ օրօրէ հովը մեղմօրէն,
Պիտի կարճեմ որ տակաւին դռն չես մեռեր.
Դռն իմ Աղունը, իմ Յարուցեալ, իմ Լուսնեղեն:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱՌ